**Արձանագրություն N 4**
**<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/7>> ծածկագրով ընթացակարգի**
**գնահատման արդյունքների հաստատման նիստի**

ք. Երևան

16 նոյեմբերի, 2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Շահինյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Քյոսեյան
Ռ. Աջամօղլյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հարությունյան

1.Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվությունը տրամադրվել է սահմանված ժամկետից 1 օր ուշ, սակայն եզրակացությունից պարզ է դարձել, որ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները՝ <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ-ն և <<Արգավանդ կահույք>> ՍՊԸ-ն, հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ:

2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները սահմանված կարգով և ժամկետում eauction.armeps.am համակարգի միջոցով գնահատող հանձնաժողովին են ներկայացրել իրենց կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ (հրավերի հավելված N 2 և 3): Ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված գնման առարկաների տեխնիկական բնութագրերին:

3.Հանձնաժողովը որոշեց <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/7>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից, իսկ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից <<Արգավանդ կահույք>> ՍՊԸ-ին:

4. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ______________________ Ա. Շահինյան

Անդամներ՝ ______________________ Ա. Քյոսեյան

______________________ Ռ. Աջամօղլյան

Քարտուղար՝ ______________________ Գ. Հարությունյան